

ԲԱԶՄԱՎԵՊ ՀԱՆԴԻՍԱՌԱՆ

ԲԱՆԱՅԻՐԱԿԱՆ -ԳԻՏԱԿԱՆ -ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԹՅԱԴ-ԹՅԱԵ

ՀԱՅԱՏ

ՏԲ



Ա. ՀԱՅԱՐ

1925

ՍԵՐԵՏԵՐ

ԹԻՒ 9

ԲՈՆՈՍԻՐԱԿԱՆ

ԶԵՌԱԳԻՒՄ Ա. Գ. 1225

Վենետիկոյ Միավարեան Ձեռագրաստան
Ա. Գ. զարանին մէջ թիւ 1225 ձեռագիրը
կը պարունակէ՝ Որդելիսաի Աշխարհազրու-
թիւն, Է. Արանչելիք և այլն: Կազմուած
է հարիւր հրնիք թուղթերէ, Մեծութիւնն
է 19,50 հմ. 14,40 հմ. լայն. իսկ գրու-
թիւնն՝ երկսիւն է, զիրը՝ նօտրագիր, նիւ-
թը՝ թուղթ, կազմը՝ կաշիէ, իսկ գրիչը՝ և
թուականը՝ անծանօթ է:

Վանատանս Ձեռագրացուցակին մէջ նը-
շանակուած է երես 29, և կը գրէ՝ նօ-
տրագիր փոքրազիր և միջակ:

Ձեռագիրի բրվանդակութիւնն է նաեւ՝
զամն Է. հրաշից աշխարհի թէ ո՞րք նն.
— Դրախտի աեղին, երկնային դրախտն,
հրեղէն կամարը, հրեշտակը, մարդկան
նկարագիր, Ա. Հրեշտակաց բազմութիւն,
զեղեցկութիւն. կը գերջացնէ՝ կտառքե-
ցաւ ասացեալըն թուոց և դասուոց հրեշ-
տակաց, թարգմանեալ ի լատին բառէ ի
հայոց յումենն Յոհաննիսէ: Յետոյ կը շա-
րունակուի՝ երկուասան չար աւանդու-

թիւնքն, որ կան ի վերայ աշխարհի. Ա-
նուանն և գործը և մահ արոց մարզա-
րէից. Անուանն և գործը տասն սիալիկանցն
թարգմանեալ ի փոանկաց բառէ ի մերս
Յովհաննիսէ Անկուրացւոյ: Սկիզբն պատ-
մութեան Ամածունի կամանցն. պատմու-
թիւնց այլ կերպիւ վասն ամազունի կա-
մանցն, — Սկիզբն առնեմք թուղթիային
թառուներուն (աստի կը սկսի աշխարհա-
գրութիւն):

Ապա կը յարէ. Յաղագս ճանաչելոյ
գմարդն ի վերայ կերպից անդամոց իւրոց,
ի վերայ քարանց (մասնաւոր ականց վրայ),
վասն ի վերայ ջրին զնալոյ: Պուուզը ծա-
ռոց առանց կուտ լինին. Զմիրզըն պահել
տարի մի անապական:

Հեղինակն՝ կը գրէ Հայաստանի և Հա-
յաստանեաց վրայ (էջ 7օ). իւր ժամա-
նակի տիտուր նկարագիրը կ'ընէ ինչ ինչ
հետաքրքրական մանրամասնութեամբը,
զորս կրկնել աւելորդ կը համարիմ, որով-
հետեւ զիտենք ամինքս ալ մեր ազգային
17

ընդհանուր թերութիւնը: Հետաքրքրաշարժ կը զննեմ ընթերցասկրաց և օգտակար հետեւելով:

« Վասն ի վերայ ջրին գնալոյ՝ Եթէ « կամիցիս գետ անցանել և ի վերայ ջուրցն « գնալ, որպէս ի վերայ քամակի, որ ոչ « թացցի ոտքը ի ջուրց, շննել տուր երկու « խարովու ի փայտէ, թանձր և ամուր, « ի ներքն ծակտիք, և ի վերան կաշու « տեղն, անարտ կաշի մի, որ ջուրն « բնաւ չ'անցանի ի ներսի կողմ... Եւ « երկու զարպուէն ի յոտիցդ տակն պինդ « և ամուր կապէ, որ բնաւ չի խաղայ ի « ներքոյ ոտքից, և առ երկայն նոյնակ մի և գնայ « ի վերայ ջրին և ի վերայ գետերոյն « անցու անձեւով, զի ոչ թողու օդն, որ « ի մէջ աշխատակած ծակտոցն կայ, միսիլ « ի ջուրն, և ձոյն ի ձեռինի զծանրու « բութիւն յինքն առնու և այնպէս թիթէ « գնաս ի վերայ ջրոյն որպէս ի ցամացիք: « Եւ զայս բազում անզամ փորձեալ են « ի յանցու և ի հունս գետոց: Եւ թէ ջուրն « սակաւ մի խորին լինի և խաղադ կամ « կանգնած, այլ հանգիստ գնան ի վերայ»:

Այսպէս կ'ուսուցանէ պտուղները անկուտ ընկելու արհեստը: « Չտնկեալ ծառոցն « ճիւղըն, եւս առաւել զիսաղողին, զայն « ճիւղն, որ զպատողն ունի՝ ճնեղեալ հան « զմիջի ծուծն և կրկին միատեղ կապէ: « Երբ կանաչի և պտուղ տայ, պտուղն « առանց կափ լինի: Եւ զորին որ տնկես « նոյնպէս արա, զծուծն հան և տնկէ, « խաղողն առանց կուտ լինի: Եւ թէ կա: « միցիս ի մի որթոյն զոյնզգոյն խաղող « լիննել նա՝ ժողովէ զսպիտակ և զկարմիր « և զսեւ և զայլ ցեղ խաղողի կոտերն, և « զուռն ճնեղեալ ի ծծի տեղիքն զկտերն « և կապէ և տնկէ, նա բերէ զոյնզգոյն « խաղող, կարմիր, սպիտակ, զինչ զայն « կտէ որ զտեալ են, և զայս առնեն « յերկիրն ֆրանկաց և փորձի է»:

« Եթէ կամիցիս պահել զմիրգըն, որ « մայ տարի մի անապական, համն և « հոտն ի ճաշակելն, զմերուէն և զսեխն, « զիննծորն, զտանձն, զխաղողն, զայս-

« պիսիցս այսպէս արա: Ա՛ռ զիազողն, « և քանիցու որ ի շուր տեղիս դիր, և « յետոյ սև ձիթիւ զկողի ծայրերն ամ « բացու, որպէս զկոնճակ, փակու յինքն և « կախեան ի փայտի, ի կախ մալով ի « պաղ տեղիս՝ նա մայ և դիմանայ մինչ « ի բոլոր տարին: Եւ զմերուէն և զսեխն « զի՞ր ի մէջ անուշ շիրայի փշեր մի, « շիրան քաղցր լինի և նոր, թէ ոչ, թէ « թիթու կամ զինէհամ լինի, նա թթու « գինի հոտ զայ ի նմանէ, այլ քաղցր « լինի շիրայն և այնպէս արա, երբ հա- « նսու ի շիրայէն և պահէ ի պաղ տեղիս, « մինչեւ ի տարի մի մայ ստուգիւ»:

Ո. Կ.

ՆԻՒԹԵՐ ՊՈՒԼԿՈՐԱՀԱՑՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԱՊՐՈՅ ՅԵԼԵՊԻ (1620 - 1677. -)

Ապրոյ Զէլէպի նշանաւոր զէմբ մը ե-
ղած է 17րդ դարու հայ կեանքին մէջ,
մեծահարուստ ու մեծասիրտ, քարեպաշտ
և զզասէր մը: Ան մէծ չափով օգտա-
կար եղած է հայութեան, միշտ ծածուկ
կերպով մասնակցելով անոր բոլոր կա-
րեւոր խնդիրներուն:

Ապրոյի նախահարց եղած են Անիէն
Կարին փախչող Աստուածատուրի Բազրա-
տոնիի զաւակները Ասլան և Ալփիար
Բազրատունիները: 1521ին այս երկու
եղբայրները փոխազդուեցան Պելկրատ՝ Սկր-
պիոյ Մայրաքաղաքը: Ասլան Բազրատու-
նիի ժառանգներուն մասին ոչինչ գիտենց:
ինքն ամուսնացած էր թէ ոչ, բայ մը
չենց զիտեր, իսկ Ալփիար Բազրատունի
ամուսնացաւ և ունեցաւ տղայ մը, Ղօնա
Մուրատ իսան Պելկրատոցի: Ղօնա Մուրատ
ամուսնացաւ Եսահրիտանի ալուն ազնուա-
կան զերգաստանէ հայունիի մը հետ: Ա-
սանց ունեցան երկու որդի, Պետրոս Զէ-
լէպի Պելկրատոցի՝ որ վազահաս մեռաւ,